Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 31-ի N2054 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 126 – թիվ133 ոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. Թիվ 128-Ա որոշումն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտմամբ։

2. Թիվ 131-Ա որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու» կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ, բացի այդ որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին։

3.Թիվ 133-Ն որոշման վերնագրում «հավելվածում» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «մեջ» բառը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
3 հոկտեմբերի 2022թ.